

ՀԱՆԳԻՍՏ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆ ԵՎ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԱՍՈՂԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՋԱՐՅԱՆԻ
(1909—1978)

Մարտի 7-ին, երեքշաբթի օրը, երեկոյան, Երևանի առողջապահության ministրության 4-րդ բուժմիավորման հիվանդանոցում, երկար և ծանր հիվանդությունից հետո, սահացավ Մայր Աթոռի միաբան և Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանը:

Նույն օրը, առավոտյան ժամը 9-ին, պատգարակի վրա և ինքնաթիռով Բաղդադից Երևան էր հասել սրբազանը՝ ուղեկցությամբ բժիշկ Պողոս Պողոսյանի և մասնագետ մի բուժքրոջ, Երևանում բուժվելու և իր կյանքի վերջին օրերը անցկացնելու Մայր Աթոռում, ապա «ընդ հովանեաւ նորա ամփոփիլ ի հող»:

Բայց արդեն ուշ էր, հիվանդությունը կատարել էր իր տխուր դերը, և սրբազանը հայրենիք էր հասնում որպես «մասունք», «նշխար» կամ «կենդանի դիակ»:

Հանգուցյալ սրբազանի վերջին օծման կարգը և թաղումը կատարվում էր մարտի 10-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, ս. Գայանե վանքի տաճարում: Մեկ օր առաջ հանգուցյալ սրբազանի անունը հիվանդանոցից փոխադրվել էր արդեն սուրբ Գայանե տաճար:

Այս տխուր առիթով հոգեհանգստյան ս. պատարագը մատուցում էր վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, իսկ վերջին օծման կարգը կատարում էր Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն հոգեվոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, Իրաքի հայոց Կենտրոնական Վարչության ներկայացուցիչ, բժիշկ Պողոս Պողոսյանը և հանգուցյալի հայրենաբնակ ծանոթներն ու բարեկամները:

Արարողությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, որը անձամբ եկել էր իր և խորհրդի անդամների ցավակցությունը հայտնելու Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի կրած ծանր կորստյան առիթով:

Վեհափառ Հայրապետը «Հայր մեր»-ից առաջ խոսում է հետևյալ հուզիչ դամբանականը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ Տ. ԱՍՈՂԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Քահանայք և ժողովուրդք, հայցեմք ի քէն Տէր բարեգութ, ընդ ննջեցեալսն հաւատով, ընկալ զսա նովին յուսով»:

Այս պահին, երբ մեր ապրումներով գտնվում ենք կյանքի և մահվան, աստենական և անդենական կյանքի սահմանի վերա, բնականաբար մեր առաջ բարձրանում է այս հարցը, թե ի՞նչ պիտի հաջորդի մահվանից հետո: Արդյոք կա՞ նաև ուրիշ կյանք այս աշխարհի կյանքից այն կողմ: Մի հարց, որի առաջ են կանգնել բոլոր մարդիկ, բոլոր ազգերը, համայն մարդկությունը հազարավոր տարիներից ի վեր, այն օրերից ի վեր, երբ մարդիկ անհատական գիտակցությանը հասան: Եվ մինչև այսօր մարդկությունը կանգնած է նույն հարցի առաջ:

Տակավին նախաքրիստոնեական շրջաններից, տարբեր քաղաքակրթությունների

Մի պահ վերջին օծման արարողությունից

շրջանում, այդ հարցումին տրվել էին տարբեր պատասխաններ, որոնց մասին խոսվում է կրոնքների պատմության մեջ: Մենք մի օրինակ ենք ուզում հիշել:

Սոկրատ, որ սպրեց Քրիստոսեն հինգ դարեր առաջ, իր մահվանից մի օր առաջ իր շուրջ հավաքված տխուր ու տրտում աշակերտներին ասաց. «Ինչո՞ւ եք այսքան տխուր և վշտացած: Այո՛, ես վաղը պետք է մահանամ, բայց դրա մեջը ի՞նչ կա հուսահատական կամ տրտմեցուցիչ: Երկուից մեկը,—կա՛մ այն կողմ կա կյանք, և այդ այլաբանային ինչքան երջանիկ պիտի լինեմ ես, հանդիպելու իմ ծնողներին, իմ ուսուցիչներին, իմ ընկերներին և կամ,—շարունակում է Սոկրատը,—եթե կյանք չկա այն աշխարհում, ապա կա հավիտենական քուն հավիտենական խաղաղության մեջ: Եվ դա լավ է, հույժ ըղձալի: Ուրեմն մի դեպքում և մյուս դեպքում մենք պետք չէ ողբանք կամ տխրենք մահվան առջև»: Ահավասիկ Սոկրատի պատասխանը:

Հետագայում քրիստոնեությունը եկավ ավելի զորացնելու հավիտենական կյանքի հույսը, հատկապես Քրիստոսի Հարության հրաշքով: Հիսուսի Հարությունը մի պատմական դեպք է և մարդկային հոգեկան աշխարհում կատարված մի հեղաշրջում, որ հավիտենական կյանքի հույսը վերածեց ստուգության: Մենք գիտենք նաև մեր եկեղեցու պատմությունից էլ, թե ինչպիսի մեծ համատավորներ են եղել մեր նախնիք, որոնք մանավանդ պատմական ճակատագրական պահերին ինչպիսի ուրախությամբ, ոգևորությամբ գնացել են դեպի մահ, այն հաստատ հույսով, որ նրանց պիտի վերապահվի հավիտենական կյանք:

Սիրելի սգակիր ժողովուրդ, Մենք այս խորհրդածությունները կատարում ենք այս պահին, որովհետև նաև նորոգ հանգուցյալ և Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբան, Իրաքի հայոց թեմական առաջնորդ Ասողիկ արքեպիսկոպոս եղավ իր կյանքի ամբողջ ընթացքում հավատքով և հույսով լեցուն մի հոգևորական: Այդ հավիտենականության հույսով է, որ իր աչքերը փակեց ահա մի քանի օրեր առաջ:

Մենք սգով համակված ենք այս պահին, ո՛չ որովհետև տարակուսս ունենք հավիտենական կյանքի հույսի նկատմամբ, այլ որովհետև մարդկորեն հնարավոր չէ չտխրել, չափսոսալ, երբ մի հարազատ, մի սիրելի, մի հավատարիմ գործակից հեռանում է ընդմիշտ մեզանից:

Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյան մեր եկեղեցու ամենանվիրված և ամենասիրված հոգևորականներից մեկն էր: Նրա կյանքը եղել է բավականին տառապալից: Նա երբեք չի խուսափած դժվարություններից, ընդհակառակը, նետված է այնտեղ, որ կարիքները շատ են եղել, իսկ նեղությունները՝ բազում:

Նա պատանի հասակում, Մեծ եղեռնի ողբերգակն օրերից հետո, ընդունվեց Երուսաղեմի վանք, այնտեղ աճեց, մեծացավ իր նման որբ ուսանողների հետ միասին: Երուսաղեմում ձեռնադրվեց կուսակրոն քահանա: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ նա գործուղվեց հեռավոր Մանջուրիա, կազմակերպելու կրոնական կյանքը ցիրուցան հայերի, կենտրոն ունենալով գործունեության Խարբին քաղաքը: Այնտեղ գործեց ծանր պայմանների տակ, մանավանդ պատերազմի տարիներին: Պատերազմից հետո վերադարձավ Երուսաղեմ, ապա պաշտոնավարեց Կալիֆորնիա, Հնդկաստան ու ապա Մայր Աթոռում, երբ մենք բոլորս սիրեցինք և գնահատեցինք նրան: Իսկ վերջին 13 տարիների ընթացքում, Մեր խնդրանքին ընդառաջելով, գնաց Իրաք, Բաղդադ քաղաքն ունենալով իբրև գործունեության կենտրոն, իբրև թեմական առաջնորդ, և մնաց այդ պաշտոնի վրա մինչև իր մահը: Նա իր անձը, իր ողջ կյանքը անբաժանելի էր նկատում ս. Էջմիածնից և մայր հայրենիքից: Ճշմարիտ հայ մարդ էր, իր հոգու բոլոր թելերով կապված էր և՛ Մայր Աթոռ ս. Էջմիածնին, և՛ մեր միաբանության, և՛ մեր վերածնված մայր հայրենիքին:

Ամեն անգամ, երբ այցելության էր գալիս Մեզ, մեծ հրճվանքով էր լցվում նրա հոգին: Երբ Մենք գնացինք Բաղդադ, արդեն ինքը հուսահատական վիճակում էր գտնվում անկողնում, հիվանդանոցում, շատ լավ խնամքի ներքև: Մենք մի քանի անգամներ այցելեցինք հիվանդանոց, երբեմն հազիվ կարողանում էր աչքը բաց անել: Բարեբախտաբար, երրորդ անգամ երբ այցելեցինք, մի քիչ ավելի կարողացավ աչքը բաց անել, հասկացավ Մեր ասածը և մի բանի խոսք էլ ասաց. իր իղձն էր, որ մի քիչ լավանա և կարողանա գալ ս. Էջմիածին, մայր հայրենիք: Այս էր իր տեսակն երազանքը, որ հայտնում էր իր շուրջինների: Այդպես է, որ անցյալ երեքշաբթի, ժամը 9-ի առեն, նա օդանավով բերվեց Երևան, հիվանդանոց:

Մեր բժիշկները պատրաստ էին ամեն օգնություն ցուցաբերելու, բայց արդեն նրա ուժերը բոլորովին սպառած էին, և մի քանի ժամից հետո աչքը փակեց: Շատ հուզիչ է, ինչ որ պատմում է բժիշկ Պողոսյանը: Օդանավի մեջ. հանապարհորդության ընթացքին, Ասողիկ արքեպիսկոպոս հոգեվարքի վիճակի մեջ էր գտնվում, ի վիճակի

չէր նույնիսկ խոսելու, ոչ էլ շարժվելու և սակայն երբ բժիշկը Ասողիկ սրբազանին ասում է՝ «Սրբազա՛ն, Հայաստան մտանք», այդ պահին, վկայում է բժիշկ Պողոսյան, նրա դեմքը պայծառացավ, ժպտաց և կարողացավ ասել. «Արարատը տեսնո՞ւմ ես»: Բժիշկն ասում է. «Այո, արդեն սկսավ երևալ»: «Երանի քեզի, ես էլ ուզում եմ տեսնել», պատասխանում է սրբազանը:

Ահա՛ այսպես է, որ Ասողիկ արքեպիսկոպոս եկավ հայրենիք, իր աչքերը փակելու և իր մարմինը հանձնելու հայրենի հողին, ս. Գայանեի օրհնության ներքև, իր սիրեցյալ եղբորը՝ Հայկազուն արքեպիսկոպոսի գերեզմանին մոտիկ:

Մենք աղոթում ենք միասին ձեզ հետ, որ Աստված քաղցրությամբ ընդունի նրա տառապած, բայց պայծառ հոգին: Թող միշտ օրհնյալ լինի նրա հիշատակը և՛ հավիտենական կյանքում, և՛ այստեղ՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնում: Ամեն:

Եկեղեցական արարողության ավարտին կատարվում է հանգուցյալ տ. Ասողիկ արքեպիսկոպոսի թաղման արարողությունը:

Սրբազանի աճյունը ամփոփվում է ս. Գայանեի միաբանական գերեզմանատանը, եկեղեցու անմիջական շրջափակի հյուսիսային կողմում:

Հանուն Իրաքի հայ համայնքի և թեմի Ազգային Կենտրոնական Վարչության, բժիշկ Պողոս Պողոսյանը խոսում է հետևյալ դամբանականը.

ԲԺԻՇԿ ՊՈՂՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ ԱՍՈՂԻԿ ԱՐՔԵՊ. ՂԱԶԱՐՅԱՆԻ ԹԱՂՄԱՆ ԱՌԹԻՎ

Գերապատիվ հոգևոր հայրեր, սիրելի սգակիր քույրեր և եղբայրներ: Իրաքահայ գաղութի կողմե, ինչպես նաև Բաղդադի Ազգային իշխանության Կեդրոնական Վարչության կողմե ինձի պարտականություն տրված է հրաժեշտի խոսք ըսել մեր Ասողիկ սրբազանին:

Ասողիկ արքեպիսկոպոս 13 տարիե ավելի մեզի եղավ առաջնորդ: Այս ժամանակաշրջանին մենք ճանչցանք զինք իբրև բարեպաշտ հոգևորական, պարկեշտ առաջնորդ և ազնիվ ազգասեր կղերական:

Ան արթնցուց իր ժողովուրդի մեջ սերը հայրենիքի, սերը հանդեպ հայ եկեղեցին, սերը հանդեպ հայ լեզուն և պատմությունը:

Ան ունեցավ առաջնորդի մը համար շատ խիստ կարևոր հատկություն մը, որ է՝ անհուն սեր հանդեպ իր ժողովուրդը, հանդեպ իր եկեղեցին, հանդեպ իր մայր հայրենիքը:

Ան կրցավ ստեղծել մեր գաղութի մեջ համերաշխություն, որովհետև գաղութը, ժողովուրդը համոզվեցավ, որ իր առաջնորդը բոլորին հավասարապես կսիրե, հոգ կտանի անխտիր բոլոր խավերուն, հատվածներուն հանդեպ:

Այսպես է, որ մեր ժողովուրդը փարեցավ իր առաջնորդին, սիրեց իր առաջնորդը, և ապացույցներեն մեկը այն էր, որ մեր սրբազանը երբ հիվանդացավ, արյան պետք ունեցավ: Կբավեր եկեղեցվո մեջ հայտարարել, թե սրբազանը արյունի պետք ունի, շարան-շարան երիտասարդներ և երիտասարդուհիներ կվազեին հիվանդանոց՝ արյուն տալու համար իրենց սիրելի հոգևոր հովվին:

Քառասուն անգամ մենք իրեն արյուն սրսկած ենք, և բոլորն առնված է ձեզի նման երիտասարդ-երիտասարդուհի հայորդիներեն:

Ինք իր մահանալեն առաջ երկու գլխավոր ցանկություններ ուներ: Առաջինը, որ օր մը բախտավորությունը ունենա հյուրասիրելու մեր սիրելի Վեհափառը Բաղդադի մեջ: Ինք չկրցավ անձնապես հյուրասիրել Վեհափառը, բայց իր կողքին գտնվող Ազգային Իշխանությունը կատարեց իր և մեր բոլորիս սրտաբուխ փափագը: Երկրորդ ցանկությունը այն էր, որ իր վերջին օրերը անցնե իր պաշտելի հայրենիքի հողի վրա և սիրելի Էջմիածնի կողքին:

Իմ վրաս պարտականություն դրվեցավ, որ ոչինչ խնայեմ մեր սրբազանի կյանքի երկարատևման համար, որպեսզի կարողանանք իրեն ի վերջո ողջ վիճակի մեջ հասցնել հայրենիք: Եվ Աստուծո կամքով ու մեր բժշկական համեստ աշխատանքով երկու իղձերն ալ կատարվեցան: Ան կրցավ ողջ մնալ և արթուն ձևով ընդունիլ Վեհափառը հիվանդանոցին մեջ, խոսիլ հետը և իր գոհունակությունը հայտնել Վեհափառին: Նաև ողջ վիճակի մեջ, հակառակ մեր բոլոր վախերուն, կրցանք հասցընել իրեն Երևանի օդանավակայան և անկից հետո հասցուցինք հիվանդանոց: Ան զգաց, որ իր իղձը կատարված է, նույն գիշերը ավանդեց հոգին:

Մենք՝ իրաքահայերս, պիտի ջանանք կատարել իր բոլոր հորդորանքները և փափագները, այն է՝ ավելի եռանդուն կերպով, մանավանդ Վեհափառին մեզի տված այցելությենեն հետո, ու անհուն սիրով մեր աչքերը ուղղած պահելով Արարատին, նորածնյալ մեր հայրենիքին, սիրեցյալ Էջմիածնին և Մայր Աթոռին և ամենահամատարիմ ձևով փարիլ Մայր Աթոռի վրա նստող ամենուս սիրեցյալ Վեհափառ Հայրապետին:

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐ ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Այնուհետև խոսք է առնում «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, որը շուրջ 50 տարիներ ճանաչում է հանգուցյալ սրբազանին Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի ուսումնառության տարիներից՝ 1929 թվականից: «Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալաւ զիս» բնաբանով նա ոգեկոչում է իրենց ուսումնառության և միաբանական կյանքի անմոռանալի անցյալը ու հիշատակը հանգուցյալ սրբազանի՝ կանգ առնելով տ. Ասողիկ սրբազանի կենսագրության և գործունեության հիմնական հանգրվանների վրա:

Տ. Ասողիկ արքեպիսկոպոսը ծնվել է 1909 թվականին, Բեհեսնի քաղաքում, Չորրորդ Հայք, Մալաթիայի շրջանում: Անցել է 1915 թվականի եղեռնի արյունոտ ճանապարհներից, կորցրել է իր ծնողներին և ապա որպես որբ 1920 թվականին ընդունվել է նախ Տարագրելուց և ապա Արաբատյան որբանոցներում, Մուսուլում և Բաքուբայում (Իրաք):

1924-ին ընդունվում է տ. Եղիշե պատրիարք Դուրյանի օրով Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանը: Որբ և ուսումնատենչ պատանու առաջ բացվում են խաղաղ կյանքի հնարավորությունները և գիտության, ուսման դռները:

1927-ին սարկավագ է ձեռնադրվում Դուրյան պատրիարքից, իսկ 1932-ին՝ կուսակրոն քահանա Թորգոմ Գուշակյան պատրիարքից՝ օծակիցներ ունենալով տ. Եղիշե վարդապետ Տերտերյանը (այժմ հայոց պատրիարք Երուսաղեմի), տ. Հայրիկ վրդ. Ապանյանը (այժմ լուսարարապետ ս. Հակոբյանց Մայր տաճարի) և տ. Տիրայր ծայրագույն վրդ. Դերվիշյանը՝ հոգևոր հովիվ Լոս Անջելոսի:

1937-ին հովվական պաշտոնով երիտասարդ տ. Ասողիկ վարդապետը մեկնում է Ծայրագույն Արևելք, որպես հոգևոր հովիվ Մանջուրիայի, Չինաստանի և Ճապոնիայի: 1941—1945 թվականներին նա ծանր օրեր է ապրում ճապոնական համակենտրոնացման ճամբարում: 1950 թվականին վերադառնում է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանք, ապա նշանակվում է հոգևոր հովիվ Լոս Անջելոսում, ուր պաշտոնավարում է մինչև 1954 թվականը: Նույն թվականին Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մեկնում է Ավստրալիա և 1957-ին նշանակվում հայրապետական պատվիրակ և առաջնորդ Հեռավոր Արևելքի երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ինդոնեզիայի, Մալայայի, Բիրմայի և Ավստրալիայի հայոց:

Սույն պաշտոնի վրա 1957-ին, իբր վարձատրություն և գնահատություն իր վարչական, թեմական գործունեության, արժանանում է եպիսկոպոսական բարձր աստիճանի:

1963—65 թվականներին պաշտոնավարում է Մայր Աթոռում որպես դասախոս հոգևոր նեմարանի և ժամօրհնող՝ Մայր տաճարում:

1965 թվականին ընտրվում է առաջնորդ Իրաքի հայոց թեմի, ուր պաշտոնավարում է բարեխղճությամբ և մեծ արդյունավետությամբ մինչև իր մահը՝ իր շուրջը հավաքելով համայնքի կենդանի և ազնիվ բոլոր ուժերը, լինում է իր բարի և քաղցր բնավորությամբ համերաշխության հրեշտակ և ձեռք-ձեռքի տված Ազգային կենտրոնական վարչության և թեմի այլ կազմակերպությունների հետ, ծավալում է եկեղեցական-ազգային, կրթական-մշակութային բեղուն գործունեություն:

1975-ին Վեհափառ Հայրապետը Իր բարձր ուշադրությանն ու գնահատությանն է արժանացնում տ. Ասողիկ սրբազանի երկարամյա հոգևոր-եկեղեցական ծառայությունները՝ նրան շնորհելով արքության պատիվ: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը նշում է Իր սրբատառ կոնդակում, որ «Ձեր ամբողջ կյանքը լուսավոր վկայություն մըն է տքնաջան աշխատանքի և անսակարկ ծառայություն նվիրված մեր սուրբ եկեղեցվո պայծառության, հայ դպրության տարածման և ազգային-հայրենասիրական ծրագիրներու կենսագործման»:

Այո՛, հանգուցյալ տ. Ասողիկ սրբազանը 45 տարի յուրովանն և իրեն հատուկ անաղմուկ և բարեխիղճ գործունեությամբ ծառայել է մեր եկեղեցուն և ժողովրդին:

Դամբանախոսը իր ճառն ավարտում է այսպես.

«Սիրելի սրբազան, այս աշխարհի վրա քո երկրավոր կյանքի վերջին րոպեներն են: Հավաքվել ենք այս անգամ քեզ ճանապարհելու դեպի հավիտենական հանգիստ ու խաղաղություն: Ահա պատրաստ է քո դագաղ-նավակը, որ քեզ տանելու է դեպի Անդենականի ափերը: Գնաս բարո՞վ, սիրելի սրբազան, գնաս բարո՞վ, այն հաստատ համոզումով, որ «զբարւոք պատերազմն պատերազմեցեր, զընթացսն կատարեցեր, զհաւատսն պահեցեր, այսուհետև կայ մնայ քեզ արդարութեան պսակն» (Բ Տիմոթ. Դ 7)»:

Հանգուցյալ սրբազանի մահվան առիթով Մայր Աթոռում ստացվեցին ցավակցական բազում հեռագրեր: Գերեզմանի վրա հրա-

պարակվում է միայն Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հետևյալ ցավակցական հեռագիրը.

«Վեհափառ Տեր, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն խորապես վշտացած է հայ եկեղեցու վաստակաշատ գործիչ, ջերմ հայրենասեր, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանի մահվան առիթով:

Խնդրում ենք ընդունել մեր խորազգաց ցավակցությունները:

Կոմիտեի նախագահ՝
ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ»

Թաղմանական արարողությունից հետո միաբանական-վանական սեղանատանը տրվում է հոգեճաշ՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Հայրենի հողը թեթև վրադ, սիրելի Ասողիկ սրբազան, հանգիստ ոսկորներիդ և հավիտենական խաղաղություն քո բարի և ազնիվ հոգուդ:

Ա. Հ.